

ԴՌ՞ՒՆ ԱԼ, ՕՊԱՄԱ, ՆԱՍԱԿ ՄԸ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱԿԻՐԷ ՄԸ

Պրն. նախագահ, ինչպե՞ս կրցար այդ մեկը ընել:
Չեր թեկնածությունը մարտը օդ էր: Դուք փոփոխություններու ջատագով էիք: Դուք հիանալի խոստումներ տուիք, եւ ամերիկահայերը վստահեցան ձեզի:
Մենք այժմ ստակալիորեն յուսախար եղած ենք, որովհետեւ դուք ձեր նախորդներն աւելի տարբեր ձեռով չվարուեցար Հայոց ցեղասպանութեան հարցին մէջ: 24 ապրիլի ձեր պատգամը Յեղասպանութիւնը ճանչնալու ձեր հանդիսատար խոստումէն շատ աւելի թերաբժէք էր:

Իբրեւ ձերակուտական եւ նախագահական թեկնածու՝ դուք ոչ մէկ կասկած ձեռքից չառ հարցին գծով ձեր մտադրութիւններուն շուրջ: Դուք այդ մասին խօսեցար ամենայն պերճախօսութեամբ եւ եռանդով:

Սակայն, երբ ժամանակը հասաւ հրապարակելու ձեր 24 ապրիլի պատգամը, մենք զարմանքով լսեցինք, որ «ցեղասպանութիւնը» փոխարինուած էր «Մեծ եղեռն»ով (հայերէն հնչիւնով արտասանուած՝ նախագահին կողմէ). խելացի խաղ մը՝ անկասկած ձեր հնարամիտ օգնականներէն մէկուն կողմէ առաջարկուած:

Դուք հաւանաբար պիտի ուզէիք գիտնալ, թէ «Մեծ եղեռն» չի նշանակեր ցեղասպանութիւն. անիկա կը նշանակէ՝ «Մեծ աղետ»: Հայերը այդ եզրը գործածեցին նախքան «ցեղասպանութիւն» եզրին հնարումը Ռոֆայէ Լենքինի կողմէ, 1940-ականներուն (Անգլերէն) «Նեանասայո» բառին բարգմանութիւնը «ցեղասպանութիւն» է հայերէնով, ինչ որ շատ աւելի ճշգրիտ եզր մըն է, քան «Մեծ եղեռն»ը, եթէ որոշէք գործածել զայն ասպազային:

Ոչ միայն ձեր օգնականները հայերէն սխալ բառը հայթայթեցին, այլեւ անոնք անոր անգլերէն բարգմանութիւնն ալ չբայտնեցին, որպէսզի ոչ հայերը հասկնային անոր իմաստը: Վերջ ի վերջոյ, ի՞նչ էր անգլերէն բնագիրին մէջ հայերէն բառ մը գործածելուն իմաստը: Արդեօք ձեր անձնակազմին մօտ սպառա՞ծ են աւելի մեղմ ոճով ցեղասպանութեան հոմանիշները:

Եթէ յանկարծ ձեր հնարագետ խորհրդականները կը կարծեն, թէ իրենք առաջինն էին «ցեղասպանութիւն»ը «Մեծ եղեռն»ով փոխարինելու խելացի խաղը խաղալուն մէջ, արտօնեցէք տեղեկացնեմ ձեզի, թէ շարք մը նախկին ղեկավարներ եւ նոյն ճարտիկութիւնը փորձած են ընել: Յովհաննէս Պօղոս Բ. պապը այդ եզրը գործածեց 2001-ին, Հայաստան այցելութեան ժամանակ: «Պի.Պի.Սի.»-ի օրին դիտել տուաւ, թէ ան «Մեծ եղեռն» բառը էր Թուրքիան չնեղացնելու համար: Չեր նախորդը՝ նախագահ Երոզ Պուշ Բրդին եւս նոյն այդ խաբող եզրին անգլերէն բարգմանութիւնը գործածեց 24 ապրիլ 2005-ի իր պատգամին մէջ, երբ ըսաւ. «Այդ ստակալի դէպքը, որ շատ մը հայեր «Մեծ աղետ»ը կը կոչեն...»:

Պրն. նախագահ, անցեալ տարի, երբ դուք ամերիկահայերուն բուժներուն եւ նիւթական յատկացումներուն կարօտ էիք, դուք անոնց շնորհակցած ճանչնալ «Մեծ եղեռն»ը... Դուք իրողապէս անոնց ըսիք. «Իբրեւ նախագահ, ես պիտի ճանչնամ Հայոց ցեղասպանութիւնը»: Առաւել, դուք չնշեցիք, թէ ձեր կողմէ Յեղասպանութեան ճանաչումը կապուած էր հայ-թրքական բանակցութիւններուն, Հայաստանի սահմանին բացումին, Իրաքի պատերազմին կամ որեւէ ուրիշ բանի հետ: Դուք յստակ խոստում մը տուիք՝ առանց «եթե»ներու կամ «բայց»երու:

Նաեւ երկու շատ յստակ հակասութիւններ կան նախագահի պաշտօնին ընտրուելէն առաջ եւ ետք ձեր գործածած բառերուն մէջ: Չեր 24 ապրիլ 2009-ի պատգամին մէջ դուք ըսիք. «Ես հաստատեցի ձեր 1915-ին պատահածներուն շուրջ իմ սեփական տեսակէտս, եւ այդ պատմութեան շուրջ իմ տեսակէտս չէ փոխուած»:

Այդուհանդերձ, 19 յունուար 2008-ին, իբրեւ նախագահական թեկնածու, դուք ըսիք. «Հայոց ցեղասպանութիւնը տարածաշրջանին մը, անձնական կարծիք մը կամ տեսակէտ մը չէ»: Առաւել, 24 ապրիլ 2009-ին դուք ըսիք. «Իմ հետաքրքրութիւնս տակալին հաստատ կը մնայ իրականութիւններուն ամբողջական, անկեղծ եւ արդար ճանաչման վրայ»: Մինչ, իբրեւ թեկնածու, դուք նշած էիք, թէ Հայոց ցեղասպանութիւնը «լայնօրէն փաստագրուած իրականութիւն մըն է՝ պատմական մեծամասշտապ փաստեր ունենալով իբրեւ նեցուկ: Իրականութիւնները անուրանալի են»:

Պրն. նախագահ, մէկ ամսուան մէջ երկու անգամ՝ թէ՛ Անգարայի եւ թէ՛ Ռաշինկըրնի մէջ դուք վերագրումներ կատարեցիք Յեղասպանութեան մասին ձեր նախկին յայտարարութիւններուն շուրջ՝ իբրեւ նախագահ բառին գործածութեան խոսափելու համար: Ասիկա ի՞նչ խաղ մըն է, որուն նաեւ դիմած էր նախագահ Երոզ Պուշ Հայրը: 20 ապրիլ 1990-ին արտասանած իր նախագահական պատգամին մէջ Պուշ ըսաւ. «1988 յունիսին իմ կատարած յայտարարութիւնս կը ներկայացնէ իմ խորունկ զգացումներս հայ ժողովուրդին եւ անոնց կրած տառապանքին նկատմամբ»: Յեղասպանութիւն եզրին գործածութեան խոսափելու համար նախագահ Պուշ անուղակի վերագրում մը ըրաւ այդ բառին, իբրեւ փոխ նախագահ եւ նախագահական թեկնածու իր ունեցած արտայայտութիւնները մէջբերելով. «Միացեալ Նահանգները պէտք է ճանչնան Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն հայ ժողովուրդին դէմ գործուած ցեղասպանութեան փորձը՝ հիմնուելով վերապրողներու, ուսումնասիրողներու եւ իրողութիւն օրին այնտեղ գտնուած մեր ներկայացուցիչներուն վկայութիւններուն վրայ, եթէ կ'ուզենք երաշխատրել այդ ձեռի սարսափելի դէպքերու անկրկնելիութիւնը»:

Միբրեւ՝ պրն. նախագահ, անձնակազմը պէտք չուներ իրենց արժէքատար ժամանակը խաղեր եւ բառային ճկունութիւններ հնարելու համար վատնելու: Եթէ չէիր ուզեր ցեղասպանութիւն եզրը գործածել, պէտք չուներ ընդհանրապէս որեւէ բան ըսելու: Հայոց ցեղասպանութիւնը արդէն իսկ ճանչցուած է ուրիշ

նախագահի մը կողմէ՝ Ռոնալտ Ռիկըրնին, որ 22 ապրիլ 1981-ին ստորագրեց նախագահական հռչակագիր մը, որուն մէջ անդրադարձաւ «հայերու ցեղասպանութեան»:

Հայերը իրականութեան մէջ ոչինչ կը շահին, եթէ ուրիշ նախագահ մը ես կրկնէ նախապէս ըսուածը: Ինչպէս գիտեք, նախագահական յայտարարութիւնները, բնկրեալական օրինագիծներուն նման, չունին որեւէ օրինական հետեւանքներ: Նախագահ Ռիկըրնին հռչակումը եւ Ներկայացուցիչներու տան մէջ Հայոց ցեղասպանութեան վերաբերող երկու օրինագիծներուն վաւերացումը՝ 1975-ին եւ 1984-ին, ոչ մէկ շօշափելի օգուտ բերած են հայերուն, ինչ կը վերաբերի կեանքի եւ կալուածի առուծով անոնց կրած հսկայական վնասներուն հատուցում տալուն:

Սակայն 24 ապրիլին ձեր տուած խոստումը չյարգելով՝ դուք միայն ակնահարեցիք ձեր վստահելիութիւնը հայ ժողովուրդին եւ համաշխարհային հանրային կարծիքին առջեւ: Արդէն իսկ «Օպամիթթ»ի կայքէջը («փոխիթիֆաթթ տոթ բոմբ») ձեր 24 ապրիլի յայտարարութիւնը կոչած է՝ «որժուած խոստում մը»: Այս շարքա, մինչ դուք կ'աւարտէք ձեր պաշտօնավարութեան առաջին հարիւր օրերը, հեռատեսիլային սփռումի մեծ ցանցեր եւ մամուլը լայնօրէն կ'անդրադառնան Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ ձեր դրածո խոստումին՝ այդպիսով ակնահարելով ձեր կատարած միւս խոստումներուն վերաբերեալ ամերիկացիներուն վստահութիւնը:

Վերջապէս, պրն. նախագահ, անպատշաճ էր ձեր կողմէ Հայաստանի հետ Թուրքիոյ երեսակայական բանակցութիւններուն շահագործումը՝ զանոնք օգտագործելով իբրեւ պատրուակ ձեր 24 ապրիլի պատգամին մէջ «ցեղասպանութիւն» եզրին օգտագործումէն խոսափելու համար: Չեր բարձր կարգը նկատի առնելով՝ դուք պէտք է գիտնայիք, որ սկիզբէն Թուրքիոյ նպատակը ստեղծելն էր այն սխալ տպաւորութիւնը, թէ Հայաստանի հետ բնանարկումները սահուն կերպով կ'ընթանան՝ բոլորին հաւատացնելով, թէ սահմանները շուտով պիտի բացուին: Թուրք ղեկավարները երկար տարիներէ ի վեր այդ մասին սուտ խոստումներ կու տան Հայաստանի: Իրականութիւնը այն է, որ երբ նախագահ ընտրուեցար, թուրք պաշտօնատարները լուրջի առին Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու ձեր քարոզարշախի խոստումը, եւ ձեր մօտիկ օգնականները անոնց յայտնեցին, որ եթէ Անգարա Հայաստանի համընդ պարեկամական քայլի մը չդիմէր, դուք պիտի կատարէիք ամերիկահայերուն ձեր խոստացածը:

Մինչ թուրք պաշտօնատարները իրենց սուտ նախաձեռնումներով յաջողեցան խաբել մնացեալ աշխարհը, ներառեալ՝ Հայաստանի յարաբերաբար անգիտ ղեկավարները, ձեզմէ, պրն. նախագահ, աւելին կ'անկկալուէր: Դուք Թուրքիոյ կեղծ քայլերուն հաւատալ ձեռնացուցիք՝ այդպիսով չյարգելով Հայոց ցեղասպանութեան նկատմամբ ձեր սկզբունքային կեցուածքը, որպէսզի ասպահովէր աֆղանական պատերազմին Թուրքիոյ մասնակցութիւնը, ինչպէս նաեւ՝ Իրաքի, Իրանի եւ Իսրայիլի նկատմամբ Միացեալ Նահանգներուն կողմէ նշանակուած իր դերակատարութեան իրագործումը:

Չեզի նաեւ պէտք էր ծանօթ ըլլար, որ Թուրքիա Հայաստանի հետ իր սահմանը պիտի չբանար մօտիկ ակազային, բացի եթէ՝ Կարաբաղի տագնապը լուծուէր Ազրպէյճանի ի նպաստ: Շարք մը պայմաններ եւ շահեր օգտագործելով, Ռուսիոյ աշխարհունքին դիմաց, որ տնտեսական եւ քաղաքական իր սեփական շահերը կը հետապնդէ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի հետ, ամերիկացի պաշտօնատարները յաջողեցան ճնշուած բանեցնել Հայաստանի վրայ, որպէսզի համաձայնի Թուրքիոյ հետ՝ Չուիքիոյ միջնորդութեամբ, միացեալ յայտարարագիր մը հրապարակել 24 ապրիլի նախօրեակին: Այդ յայտարարագիրը յարմար այն ծածկն էր, որուն տակ կրնայիք պահել Յեղասպանութեան հարցը՝ Թուրքիոյ հաճելի ըլլալու համար:

Պրն. նախագահ, այդպիսի յայտարարագիրի մը ստորագրութիւնը պարտադրելով Հայաստանին՝ դուք յաջողեցար Սփիւքի, ինչպէս նաեւ Հայաստանի հայերը լաբել Երեսանի կառավարութեան դէմ: Իբրեւ ուղղակի հետեւանք այդ քայլին, Հայ յեղափոխական դաշնակցութիւնը՝ Հայաստանի հեղինակները քաղաքական կոսակցութիւններէն մը շուրջ բանակցութիւններու, որոնք կրնան ակնահարել երկրին ազգային շահերը եւ պատմական իրաւունքները: Հայ յեղափոխական դաշնակցութիւնը նաեւ խստօրէն դէմ է Թուրքիոյ հետ երկկողմանի պատմական յանձնախուրք մը կազմելու Հայաստանի հրապարակուած տաղարկութեան. բան մը, որ Թուրքիան կրնայ գործածել հարցականի տակ առնելու համար Հայոց ցեղասպանութեան իրականութիւնները:

Պրն. նախագահ, յառաջիկայ օրերուն, մինչ ձեր վարչամեքենան Ռաշինկըրն կը հրապարակէ Հայաստանի ղեկավարները, որպէսզի յաւելեալ զիջումներ քածէ անոնցմէ, հաճիք յիշեցէք, որ զանոնք միայն որոշ չափով կարելի է ճնշել, որովհետեւ կրնան իրենց իշխանութիւնը կորսնցնել, ինչպէս պատահեցաւ Հայաստանի առաջին նախագահին պարագային. Յեղասպանութեան եւ դարաբաղեան հարցերուն կարմիր գիծերը անցնիլը կրնայ վտանգել իշխող համայնքական մնացեալ ուժերուն նուրբ հաւասարակշռութիւնը, անկախ անկէ, թէ քանի՞ խոստումներ կը տրուին կամ շարժառիթներ կը ներկայացուին Ռաշինկըրնի կողմէ:

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵՆ
«Քալիֆորնիա Քուրիքը»-ի խմբագիր

ԱՆԿԻԻՆ ԴԱՐՁԱԻ ՕՊԱՄԱՆ ԽՆՃՈՅՔ ՍԱՐՔԵԾ... ՍԱՏԱՆԱՆ

Եւ եղեւ խաւար...: Տար միլիոն հայեր ակրնդէտ ու մեծ հետաքրքրութեամբ, առաւել՝ անհամբերութեամբ կը սպասէինք Միացեալ Նահանգներու արդարաւէր նախագահին Ապրիլ 24-ի արժի արտասանելիք խօսքին, համոզուած ըլլալով, որ ան անպայման պիտի արտասանէր «Յեղասպանութիւն» բառը, գէթ յարգելով իր նախագահական հանրաճանաչ խոստումը, թե՛ թեցնելու համար մեր սիրտերուն եւ հոգիներուն վրայ ինձսու չորս տարիներէ ի վեր ծանր ճնշող հարուածը:

Մեզի չափ եւ աւելի գուցէ, հետաքրքիր էին թորքերը: Անոնք եւս մեծ մտահոգութեամբ կը սպասէին Պարաք Օպամայի ելոյթին, յուսալով՝ որ ան կը խոստայի «Յեղասպանութիւն» բառը գործածելէ, որպէսզի այս անգամ եւս առնէին երկար ու խորունկ շունչ, հաւատալով ամերիկո-թրքական բարեկամական ամուր կապերու կարեւորութեան, որոնք կ'ընդգրկէին բարեկամութեանէն շատ աւելին երկարող զաղտնի համաձայնութիւններ, որոնց թի՛չ ծանօթ է պահովարար հանրութիւնը:

Հասաւ Ապրիլի 24-ը, ու պատահեցաւ... անսպասելին: Սկիզբը՝ շշմեցանք, սպա վրդովեցանք, հոսկ սպա զարմացանք. բանի որ՝ տրուած խոստումները, ձեռք ձգուած ընտրական բուժները, ստաքուած նամակները, նախագահ Օպամայի անձնական կարծիքները այլ բան կը յուշէին՝ դեռ մինչեւ երէկ, յուսարդելով ամբողջ հայութիւնը: Որովհետեւ, կ'սկսեցինք լսել, թէ ան պիտի որդեգրէր արժանավայել կեցածք, ամօթի մէջ ձգելով Միացեալ Նահանգներու նախկին «սպիտակերես» կարգ մը նախագահներու ժխտական կեցուածքները...:

Յուսաբարեցանք, յուսախարութեամբ ազգովին: Աւելի ճիշդ պիտի ըլլար բնութագրել՝ քիչի՛կ մ'ալ «խարութեցա՛նք» Սպիտակ Տան սեւամորթ ու «ճէճթլմէճ» ներկայացուցիչէն, որ ընաւ տարբերութիւն չունեցաւ իր «ոչ սեւերես» նախկին պաշտօնակիցներէն:

Այլեւս լաւատեղեակ ենք, թէ խիղճ, զգացում, արդարութիւն, մարդկային իրաւունք բառերը բառարաններէն դուրս ձգուած են տարիներէ ի վեր, եւ անոնց տեղ արձանագրուած են «դիւանագիտական եւ քաղաքական շահ ու հաշիւ» հասկացողութիւնները, ըստ ժամանակի եւ ըստ պայմաններու:

Աշխարհացրի հայ զանգուածներուն համար այս անգամ ալ ցուցաբերուած վերաբերմունքը, շատ յստակ կը ցուցանէր Միացեալ Նահանգներու ղեկավարութեան որդեգրած թրքանպաստ դիրքորոշումը, որոնք քաջ գիտէին զնախաւոր Թուրքիոյ քաղաքական եւ գիւնորական ուժը, անոր աշխարհաքաղաքական բացասիկ դիրքը՝ Միջին Արեւելքէ ներս, մասնաւոր ներկայ հանգրուանին, երբ Միջին Արեւելքը կը մնանի վստօղի տակտի:

Պաղ պատերազմէն ետք հրապարակի վրայ պարզուող այսօրայ քաղաքական իրաւորութիւնը՝ Միացեալ Նահանգներու եւ Ռուսաստանի, սպա Մ.Նահանգներու եւ Պարսկաստանի միջեւ, առաւել՝ Վրաստանէ ներս տիրող իրադրութիւնը եւ անոր վերջերս ունեցած պատերազմը իր հիստիի հարեւանին հետ, ու նաեւ Ազրպէյճանական քարիւղի հաշիւները, կրկին անգամ խանգարեցին քաղաքական «պորտա»ն... որոնց պատճառով դարձեալ կարեւորեցաւ Թուրքիան, որպէս Մ.Նահանգներու եւ ՆԱՌՕ-ի կարեւոր, վաղեմի ու հաւատարիմ գործընկեր:

Շատ բնականաբար, տիրող կացութեանց մէջ, հակառակ իր տուած խոստումին, կը խորհիւք որ կ'երեւի դժուար էր Մ. Նահանգներու նախագահին համար ընդունիլ «Յեղասպանութիւն» բառը, գոնէ այս հանգրքուանին, որ բարարութեան «Մեծ Եղեռն» կոչել 1915 թուականի ահռելի ջարդերն ու կոտորածները, «հայերէն լեզուով», անշուշտ քիչ մ'ալ ականջ տալով իր խորհրդատուներուն, չվշտացնելու համար «իր չիպացած բարեկամը»:

Պարոն Օպամային «Մեծ Եղեռն» յորջորջումը, եկաւ մեզի յիշեցնելու անգամ մ'ալ, մէկնարկեալ «Երկաթէ շերտի» թողած նախկին տպաւորութիւնը, երբ մասնաւոր եթէ՛ նժարի վրայ դնենք մեր եւ մեր դարաւոր ռոսիյին ունեցած զինու ուժին անբացատրելի տարբերութիւնը, այդ պարագային միտքերու մէջ կը ձնին «նոր-նոր» թորթթէ շերտի»ներ:

Մեզի, հայերու համար շատ յստակ է «Մեծ Եղեռն» բառերուն իմաստը: Ուրիշ ազգեր չապրեցան «Մեծ Եղեռն»՝ իրենց հայրենի հողին վրայ եւ չքրեցան անասատներ ու չգրաւուեցան անոնց հայրենիքները: Ռուս, օգտագործուած բառերուն ճշգրիտ բացատրութիւնը մեզի համար ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ ցեղասպանութիւն, բայց դիւանագիտական աշխարհին համար «դժբախտ պատահար ու մեծ ոճիր», միայն:

Սակայն, հակառակ անսպասուած պատահարին, մենք դիւանագիտական պաղ ժպիտով ու անտարբեր ոճով «հիմնալուրհիմա» պիտի ընդունինք արտասանուածը, (առանց նեղացնելու պարոն Օպաման), սպասելով Մ. Նահանգներու գոնկրէսին առնելիք որոշումին, որուն յաջողութեան համար դարձեալ անհրաժեշտ է քրոնաթոր աշխատանք, անդադար վազք եւ մասնաւոր անկրկն կամք:

Հետեւելով դէպքերու զարգացումներուն, չզարմացանք հակառակորդ կողմի դիրքորոշման, որոնք դիւանագիտական ոճով ազնակէս մը վարուեցան, թէ՛ «որպէ՛ս թէ նեղացած են ու անանկալի եկած, օգտագործուած «Մեծ Եղեռն» արտայայտութեանէն... բայց ներքուստ մնալով ապահով ու ժամանակաւոր սպա գոհ, որովհետեւ այս տարի ալ յաջողեցան մինչեւ գալ Ապրիլ 24՝ բնացնել հանրային կարծիքը եւ աշխարհը, շարունակելու համար իրենց պայքարը՝ «ֆոթոպոլային դիւանագիտութեամբ» սկսած մրցակազմի սահմաններէն ներս:

Կը ցախիւք, որ աշխարհի գերեզօր պետութեան նախագահ Օպաման չյարգեց իր նախընտրական խոստումը, բայց յարգեց՝ Սպիտակ Տան խաղի օրէնքները, ճկուն մէկ դարձուածքով, օգտագործելով «երկու չափ, երկու կշիռ»: Սակայն մեզի՛ աւերանտեան որձեւէզ քաղաքականութեան արդէն քիչի՛կ մը ծանօթ հայերու համար, կը մնայ շուտահաստի, շթուլնալ, այլ՝ աւելի քան երբեք հետապնդել, պահանջել եւ մասնաւոր չքանդել ստեղծուած կամորջները, հակառակ մեր համոզման, թէ՛:

–Անկրկն դարձաւ Օպաման, եւ մատի՛ խնճոք սարքեց սատանան...:

ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ